ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՎԱՇՎՏՄ-ՀՄԱԾՁԲ-19/9»

ք. Երևան «02» 07 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ»ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Եսայանի , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Ա.Կոտոլյանի (այսուհետ՝ Ծառայությունը ստացող) բոլորը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 **Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է սույն թվականի հունվարի մեկից ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև սույն ծառայության մրցակցային գնման ձևով նոր կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսվա վերջը՝ համաձայն ՀՀ կառավարության 28.02.2019 թ. N 200-Ա որոշման:**

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու՝ փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը կազմում է 1295600 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Սույն պայմանագրի համաձայն «Պատվիրատուի » կողմից «Կատարողին» վճարման ենթակա գումարը /պայմանագրի գինը/ կազմված է.

- **Բաժանորդային վճարից՝ 294000 /երկու հարյուր իննսունչորս հազար/ ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) տարեկան, որը հաշվարկվում և վճարվում է ամսական կտրվածքով՝ փաստացի մատուցված ծառայությունների վճարի հետ միաժամանակ,**
- **Ինչպես նաև փաստացի մատուցված էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների վճարից, որը հաշվարկվում ամսական կտրվածքով՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող աղյուսակով 1-ում ամրագրված գնացուցակի (նշված գները ներառում են ԱԱՀ):**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրածվնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024099 ՀՎՀՀ 02505554 /ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ	Շուկայի վերահսկողության տեսչական մարմին ք.Երևան 0051, Կումիտաս 49/2 ՀՎՀՀ 00190146 /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«02» 07 2019թ. կնքված
«ԿԱՇԿՏՄ-ՀՄԱԾՁԲ-19/9» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	64211100/1	Հանրային հեռախոսային ծառայությունների Տեխնիկական բնութագիրը տես կից հավելված 1.1	դրամ	1295600	1	ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2	Պայմանագիրը ուժի մեջ է մտնում մինչև սույն ծառայության մրցակցային գնման ձևով նոր կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսվա վերջը /*Համաձայն ՀՀ կառավարության 28.02.2019 թ. N 200-Ա որոշման*/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024099 ՀՎՀՀ 02505554	<<Յուքոմ>> ՍՊԸ ք.Երևան, Տերյան 19, բն. 4 <<Ամերիաբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1570043102134100 ՀՎՀՀ 00024873	Շուկայի վերահսկողության տեսչական մարմին ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00190146
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հեռախոսակապի ծառայություն	Հանրային հեռախոսային ծառայություններ	Պատվիրատուի կարիքների համար տրամադրել ՀՀ աշխարհագրորեն ամրակցված մալուխային տարբերակով համարագրման պլանից հատկացված անհրաժեշտ քանակությամբ հեռախոսահամարներ՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, որոնք հնարավորություն կտան Պատվիրատուին ամրակցված վայրում/վայրերում ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով իրական ժամանակում կատարելու և ստանալու ներհանրապետական և / կամ միջազգային զանգեր:

N	Հեռախոսազանգերի ուղղությունները	Սակագին (ՀՀ դրամ/րոպե)	
		Անվճար րոպեներ	Վճարովի րոպեներ
1	Դեպի 011,012, 060 և 010 կոդով և ՀՀ մարզեր ֆիքսված հեռախոսակապ	360	4
2	Դեպի ՀՀ բջջային ցանցեր	-	24
3	Դեպի ԼՂՀ բջջային հեռախոսակապ	-	28
4	Դեպի ԼՂՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր	-	18
5	Միջազգային զանգեր	-	85

Ծառայությունը մատուցվում է հետևյալ հասցեներում.

N	Տեղադրման վայր/հասցե	Հեռախոսահամարները | քանակը
1	Կոմիտաս 49/2	Մինչև 11/ 1 հեռախոսի ամսավճարը 1500 ՀՀԴ

Լրացուցիչ ծառայություններ

Հարկային հաշիվների ներկայացումը, ոչ ուշ քան ընթացիկ ամսվա մինչև 10-ը: Անհրաժեշտության դեպքում՝ ըստ պահանջի պետք է տրամադրվի հաշվի մանրամասնումը՝ վերծանումը: Վերծանումը պետք է տրամադրվի միայն կազմակերպության լիազորված անձին:

Պատվիրատուի դիմելու դեպքում ապահովել հեռախոսահամարների մասին տեղեկությունների ստացումը ծառայություններ մատուցողի կայքի միջոցով:

Ծառայության մատուցումը և սպասարկումը պետք է իրականացվի համապատասխան ՀՀ էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի:

Այլ պայմաններ

Ծառայություն մատուցողը պետք է պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ խոսակցության փաստը, զանգողի և զանգը ստացողի ինքնությունը և նրանց գտնվելու վայրերը) և հեռախոսացանցով անցնող այլ հաղորդումների պարունակությունը և չպետք է գրանցի կամ պահպանի այդ տվյալները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ դատարանի որոշման համաձայն:

...նոսակապի ...առայություն	Հանրային հեռախոսային ծառայություններ	Պատվիրատուի կարիքների համար տրամադրել ՀՀ աշխարհագրորեն ամրակցված մալուխային տարբերակով համարագրման պլանից հատկացված անհրաժեշտ քանակությամբ հեռախոսահամարներ՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, որոնք հնարավորություն կտան Պատվիրատուին ամրակցված վայրում/վայրերում ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով իրական ժամանակում ստանալու ներհանրապետական զանգեր:

N	Հեռախոսահամար	Ամսավճար
	8122	8000 ՀՀԴ

Ծառայությունը մատուցվում է հետևյալ հասցեներում.

N	Տեղադրման վայր/հասցե	Հեռախոսահամարները | քանակը
1	Կոմիտաս 49/2	1

Լրացուցիչ ծառայություններ

Հարկային հաշիվների ներկայացումը, ոչ ուշ քան ընթացիկ ամսվա մինչև 10-ը: Անհրաժեշտության դեպքում՝ ըստ պահանջի պետք է՝տրամադրվի հաշվի մանրամասնումը՝ վերծանումը: Վերծանումը պետք է տրամադրվի միայն կազմակերպության լիազորված անձին:

Պատվիրատուի դիմելու դեպքում ապահովել հեռախոսահամարների մասին տեղեկությունների ստացումը ծառայություններ մատուցողի կայքի միջոցով:

Ծառայության մատուցումը և սպասարկումը պետք է իրականացվի համապատասխան ՀՀ էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի:

Այլ պայմաններ

Ծառայություն մատուցողը պետք է պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ խոսակցության փաստը զանգը ստացողի ինքնությունը և նրանց գտնվելու վայրերը) և հեռախոսացանցով անցնող այլ հաղորդումների պարունակությունը և չպետք է գրանցի կամ պահպանի այդ տվյալները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ դատարանի որոշման համաձայն:

1. Բաժանորդի արտաքին համարները պետք է լինեն մինչև 11 հատ:
2. Օպերատորի կողմից բաժանորդի տարածքում պետք է կարգաբերվեն և գործարկվեն բոլոր անհրաժեշտ սարք-սարքավորումները, սերվերային հանգույցները ինչպես նաև անցկացվեն անհրաժեշտ կապուղիները:
3. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 4 (չորս) ժամը:
4. Բաժանորդը պետք է հնարավորություն ունենա ինքնուրույն կառավարել ծառայությունից օգտվողների իրավունքները: Օպերատորը պետք է տրամադրի 24/7 ռեժիմով աշխատող տեխնիկական և ծրագրային առանձնացված օպերատորով սպասարկում:
5. Օպերատորը պետք է ապահովի կապուղիների անցկացումը, բոլոր անհրաժեշտ սարք սարքավորումների տեղադրումը, փորձարկումը, թերությունների վերացումը և համակարգի վերջնական գործարկումը ոչ ուշ, քան Ծառայության մատուցումից 10 աշխատանքային օր առաջ:

8.Նշված հեռախոսահամարները կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ պատվիրատուի պահանջի հիման վրա:

9. Ընդ որում ծառայությունների ամսավճարը որոշվում է ըստ բաժանորդի փաստացի տրամադրված հեռախոսային ծառայությունների քանակի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024099 ՀՎՀՀ 02505554 /ստորագրություն/ Կ.Տ	<<Յուքոմ>> ՍՊԸ ք.Երևան, Տերյան 19, բն. 4 <<Ամերիաբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1570043102134100 ՀՎՀՀ 00024673 /ստորագրություն/ Կ.Տ	Շուկայի վերահսկողության տեսչական մարմին ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00190146 /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
« 02 » 07 2019թ. կնքված
«ՎԱՇՎՏՄ-ՀՄԱԾՁԲ-19/9» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	64211100/1	Հանրային հեռախոսային ծառայություններ	0	0	0	0	0	0	777360	777360	777360	1295600	1295600	1295600

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:
** Վճարումները նախատեսվում է իրականացնել փաստացի կատարված ծառայությունների դիմաց

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024099 ՀՎՀՀ 02505554 /ստորագրություն/ Կ.Տ	<<Յուքոմ>> ՍՊԸ ք.Երևան, Տերյան 19, բն. 4 <<Ամերիաբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1570043102134100 ՀՎՀՀ 00024873 /ստորագրություն/ Կ.Տ	Շուկայի վերահսկողության տեսչական մարմին ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00190146 /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 3
«02» 07 2019թ. կնքված
«ՎԱՇՎՏՄ-ՀՄԱԾՁԲ-19/9» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____Յուքոմ ՍՊԸ_____

գտնվելու վայրը ք.Երևան, Տերյան 19, բն. 4

հհ___1570043102134100

հվհհ___00024873_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« 02 » 07 2019թ. կնքված
«ՎԱՇՎՏՄ-ՀՄԱԾՁԲ-19/9» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն